ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Ք. Սևան

04.04.2019թ.
Ժամը 10:30

Հանձնաժողովի նախագահ՝ Սարգիս Վարդանյան

Անդամներ՝ Վարդուհի Վարդանյան

Մարիաննա Առաքելյան

Մարի Սիմոնյան

Ռոմելա Հարությունյան

Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/7 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
(Ս. Վարդանյան)

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.
2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:
3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.
(Ս. Վարդանյան)

1.1 ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին <<Ալֆա-Ֆարմ>> ՓԲԸ-ն, <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ն և <<Արֆարմացիա>> ՓԲԸ-ն հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը ներկայացրել են հրավերով սահմանված ժամկետում և կարգով:

1.2 <<Ալֆա-Ֆարմ>> ՓԲԸ-ի և <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցների կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը համապատասխանում են սույն հրավերի պահանջներին:

<<Արֆարմացիա>> ՓԲԸ-ի ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցների կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը համապատասխանում են սույն հրավերի պահանջներին, բացառությամբ 13-րդ չափաբաժնի, քանի որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցների կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրում <<Դիկլոֆենակ>> դեղորայքի փոխարեն նշել է՝ <<իբուպրոֆեն>>:

1.3 Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 47-րդ կետով հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը, որի մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել **<<Արֆարմացիա>> ՓԲԸ-ին՝** առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 10.04.2019թ-ի ժամը 11:00 շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:

(Ս. Վարդանյան)

2.1 Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 43-րդ կետի 3-րդ ենթակետով 28.03.2019թ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ **<<Ալֆա-Ֆարմ>> ՓԲԸ-ի, <<Արֆարմացիա>> ՓԲԸ-ի և <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ի՝** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետով սահմանված ժամկետում՝ հարցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել է հարցման մասին տեղեկատվությունները, համաձայն որի **<<Ալֆա-Ֆարմ>> ՓԲԸ-ն, <<Արֆարմացիա>> ՓԲԸ-ն և <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ն** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Ս. Վարդանյան)

3.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.
(Ս. Վարդանյան)

5.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/7 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 10.04.2019թ-ին ժամը 11:00, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Վարդանյան

Անդամներ՝ Վ. Վարդանյան

Մ. Առաքելյան

Մ. Սիմոնյան

Ռ. Հարությունյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան